



PRESS RELEASE

Սեպտեմբերի 25, 2014

Կեսայտարարվեն Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեքի մրցանակակիրները

Տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2014 թվականի սեպտեմբերի 26-ին, Երևանում: Միջոցառումը նվիրված է Տեղեկատվության ազատության միջազգային օրվան և կազմակերպվում է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Կշնորհվեն մրցանակաբաշխության դրական մրցանակը՝ Ոսկե բանալին՝ որպես բաց և հրապարակային աշխատանքի խորհրդանիշ և մրցանակաբաշխության բացասական խորհրդանիշը՝ Ժանգոտ կողպեքը, որպես փակ աշխատանքի խորհրդանիշ: Մրցանակակիրներին որոշում է տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, ոլորտի փորձագետներից կազմված անկախ ժյուրին: Ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց և ԻԱԿ-ի մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաև կենտրոնի եռամսյակային Սև ցուցակները, որում ընդգրկվում են տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները: Հրապարակային և փակ գերատեսչությունների ընտրության չափանիշներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <http://www.foi.am/hy/award-standards/>: Նախորդ տարիների մրցանակակիրների մասին տեղեկությունները հասանելի են այստեղ՝ <http://www.foi.am/hy/awards-winners/>:

2002 թ.-ից վեր աշխարհի ավելի քան 100 երկրներում սեպտեմբերի 28-ը նշվում է որպես ՏԱ միջազգային օր: ԻԱԿ ամենամյա մրցանակաբաշխությունը Հայաստանում կազմակերպվում է 2003 թ.-ից ի վեր, երբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունվեց: Այն կազմակերպվում է ԻԱԿ-ի կողմից, գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Մրցանակաբաշխությունը դարձել է կարևոր գործիք՝ գնահատելու համար հրապարակային և բաց աշխատանքը, և քննադատելու փակ և գաղտնի աշխատանքը:

Ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսական աջակցությամբ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2014թ.-ի հունվարից, կավարտվի 2016թ.-ի դեկտեմբերին: Բյուջեն կազմում է 650.000 Եվրո:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻՆ.
Լրագրողների մուտքն ազատ է:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) հիմնադրվել է 1995թ.-ին: Առաքելությունն է նպաստել Հայաստանում օրենքի գերակայության և ժողովրդավարության հաստատմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, ուր մարդիկ իրազեկ են իրենց իրավունքներին և իրենց իրավունքները պաշտպանված են:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) Հայաստանում գործում է ավելի քան 10 տարի՝ 2001թ.-ից: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել՝ Շուշան Դոյդոյան - ԻԱԿ նախագահ, Ծրագրի ղեկավարի տեղակալ, ենթադրամաշնորհների համակարգող:

Աշխատանքային օրերին՝ 9:00 – 18:00, 560-360 հեռախոսահամարով
Էլ. փոստ՝ foi@foi.am
Website: www.foi.am



<p>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա Հասցե: ՀՀ, Երևան 0010, Նալբանդյան 7, բն 2 Հեռ.՝ +37410 54 01 99 Ֆաքս. +37410 58 02 99</p>	<p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն Հասցե՝ ՀՀ, Երևան 0010 Բուզանդի 1/3 Հեռ. +37410 56 03 60 Ֆաքս +37410 56 03 60</p>	<p>Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Հայաստանում ԵՄ պատվիրակություն Հեռ. +37410 54 64 94 Ֆաքս. +37410 54 64 95</p>	<p>Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ի գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոտու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:</p>
---	---	--	--